Դափնեպսակ՝ մոխրի փոխարեն. Ներման բժշկող ճանապարհը

Տարիների ընթացքում և ներման այդ ճանապարհին խաղաղություն ու բժշկություն գտնելու իմ ջանքերում ես խորապես հասկացա, որ նույն Աստծո Որդին, որը քավեց իմ մեղքերը, նույն Քավիչն է, որը կփրկի նաև նրանց, ովքեր խորապես վիրավորել են ինձ: Ես չէի կարող իսկապես հավատալ առաջին ճշմարտությանը՝ առանց հավատալու երկրորդին:

Քանի որ Փրկչի հանդեպ իմ սերն աճել է, ցավն ու զայրույթը Նրա բուժիչ բալասանով փոխարինելու ցանկությունս մեծացել է: Դա երկար տարիների գործընթաց էր, որը պահանջում էր քաջություն, զգայունություն, հաստատակամություն, նաև սովորել վստահելու Փրկչի՝ պահպանելու և բժշկելու աստվածային զորությանը: Ես դեռ գործ ունեմ անելու, բայց սրտումս այլևս չկա զայրույթի և վրեժխնդրության այն զգացումը: Ինձ «նոր սիրտ» է տրվել [Եզեկիել 36.26], սիրտ, որը զգացել է անձնական Փրկչի խոր ու մնայուն սերը, որը մնաց իմ կողքին, որը նրբորեն ու համբերությամբ առաջնորդեց ինձ մի ավելի լավ տեղ. Նա արտասվում էր ինձ հետ, և Նա գիտեր իմ վիշտը: . . .

Երեց Ռիչարդ Գ. Սքոթն ասել է. «Դուք չեք կարող ջնջել այն, ինչ արվել է, բայց կարող եք ներել: Ներումը բուժում է սոսկալի, ամենախոր վերքերը, քանզի այն թույլ է տալիս, որ Աստծո սերը մաքրի ձեր սիրտն ու միտքը ատելության թույնից: Այն մաքրում է ձեր գիտակցությունը վրեժխնդրության ցանկությունից: Այն տեղ է բացում Տիրոջ մաքրագործող, բժշկող, վերականգնող սիրո համար» [“Healing the Tragic Scars of Abuse,” *Ensign,* մայիս 1992, 33]:

Իմ երկրային հայրը նույնպես ունեցել է սրտի հրաշք փոփոխություն վերջին տարիներին և դիմել է Տիրոջը. մի բան, որը երբեք չէի ակնկալի այս կյանքում: Դա ինձ համար մեկ այլ վկայություն էր Հիսուս Քրիստոսի ամբողջական և փոխակերպող զորության մասին:

Ես գիտեմ, որ Նա կարող է բժշկել մեղսավորին և նրանց, ում դեմ մեղանչել են: Նա աշխարհի Փրկիչն ու Քավիչն է, որը տվեց Իր կյանքը, որպեսզի մենք կարողանանք կրկին ապրել: Նա ասել է. «Տիրոջ Հոգին ինձ վրա է, որովհետև ի՛նձ օծեց և ի՛նձ ուղարկեց աղքատներին բարի լուրը ավետելու, *սրտով բեկյալներին բժշկելու*, գերիներին ազատություն քարոզելու և կույրերին՝ տեսողություն [տալու], *հարստահարվածներին ազատ արձակելու*» [Ղուկաս 4.18, շեշտադրումն ավելացված է]:

Բոլոր նրանց, ովքեր սրտով կոտրված են, գերի են, հարստահարված և գուցե կուրացած են վիրավորանքից կամ մեղքից, Նա առաջարկում է բժշկում, վերականգնում և ազատում: Ես վկայում եմ, որ իրական են բժշկումն ու վերականգնումը, որ Նա է առաջարկում: Այդ բժշկման ժամանակը անհատական է, և մենք չենք կարող դատել ուրիշի ժամանակի մասին: Կարևոր է, որ այդ ընթացքում ինքներս մեզ հատկացնենք անհրաժեշտ ժամանակը՝ բժշկվելու և ինքներս մեր հանդեպ բարի լինելու համար: Փրկիչը միշտ ողորմած է և ուշադիր ու պատրաստ է տրամադրել մեզ անհրաժեշտ աջակցությունը:

Ներման և ապաքինման ճանապարհին գոյություն ունի ընտրության հնարավորություն՝ չշարունակել անառողջ օրինաչափություններն ու հարաբերությունները մեր ընտանիքներում և այլուր: Մեր ազդեցության տակ գտնվող բոլոր մարդկանց մենք կարող ենք բարություն առաջարկել՝ դաժանության փոխարեն, սեր՝ ատելության փոխարեն, մեղմություն՝ տարաձայնության փոխարեն, անվտանգություն՝ աղետի փոխարեն և խաղաղություն՝ վեճի փոխարեն:

Տալ այն, ինչ ձեզ մերժել են, աստվածային բժշկության հզոր մասն է, որը հնարավոր է Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատքի միջոցով: Ապրել այնպես, որ, ինչպես Եսայիան է ասել, դափնեպսակ տաք՝ ձեր կյանքի մոխրի փոխարեն, [տես Եսայիա 61.3] և դա կլինի հավատքի գործողություն, որը հետևում է Փրկչի գերագույն օրինակին, որը տանջվեց այն ամենի համար, ինչը կարող էր օգնել բոլորին:

Ես վկայում եմ, որ սիրո և ներման ամենամեծ օրինակը մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսի օրինակն է, որը դառը տառապանքի մեջ ասաց. «Հայր, ներիր նրանց, որովհետև չգիտեն, թե ի՛նչ են անում» [Ղուկաս 23.34]:
(Քրիստին Մ. Յի «Դափնեպսակ՝ մոխրի փոխարեն. Ներման բժշկող ճանապարհը», *Լիահոնա*, նոյ. 2022, 37– 38)

© 2024 by Intellectual Reserve, Inc. All rights reserved. PD80007812_201_262-1